Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 474 - Ա որոշման

«Արցախցի ընտանիքներին Հայաստանում աշխատանքով ապահովում»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է աշխատանքով ապահովել 2020 թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծած պատերազմի հետևանքով Արցախից տեղահանված և փաստացի Հայաստանի Հանրապետությունում գտնվող և առանց աշխատանքի մնացած 7 ընտանիքի:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից՝ խնայված գումարներն ուղղելով ծրագրի շահառուների թվի ավելացմանը:
3.	Բարեգործը	«Ավրորա մարդասիրական նախաձեռնություն» բարեգործական հիմնադրամ, Հայաստան
4.	Ծրագիրը կատարողը	Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամ (ՀԿՍ): ՀՀ 1101, Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ՀՎՀՀ՝ 04717139
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Արմավիրի, Արագածոտնի, Շիրակի մարզերում ապաստանած Արցախից ժամանած 7 ընտանիք կստանա աջակցություն՝ ջերմոցային տնտեսության զարգացման և հավաքածության համար: Բնագավառը՝ գյուղատնտեսություն
6.	Ծրագրի բյուջեն	2,595,000 դրամ (համարժեք 5,000 ԱՄՆ դոլարին)
7.	Բարեգործություն ստացողը	Արցախից ինքնաբուխ ժամանած և Հայաստանում բնակվող 7 ընտանիք:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	25.05.2021 թ. – 30.06.2021 թ.

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի միջոցառումներն են՝ 1. Աջակցության տրամադրում Արցախից տեղահանված և փաստացի Հայաստանի Հանրապետությունում գտնվող վեց ընտանիքի՝ 2,510,800 դրամ Աջակցությունը տրամադրվելու է ըստ հետևյալի՝ • Արմավիրի մարզի Լուսայգյուղ համայնքում բնակվող մեկ ընտանիք կստանա 800 մ² պոլիէթիլենային թաղանթ և 300 մ պրոֆիլ՝ ջերմոցային տնտեսություն ստեղծելու համար: (800 մ² x 530 դրամ) + (300մx 400 դրամ) Ընդամենը ֆինանսական միջոցներ՝ 544,000 դրամ • Արմավիրի, Արագածոտնի, Շիրակի և Արարատի մարզերում բնակվող վեց ընտանիք կստանա 50-ական հավ / աքլոր և կեր՝ 4-5 ամսվա համար: (6x 44 հավ x 2,800դրամ + 6 x 6 աքլոր x 2,600 դրամ) + (6 x 900կգ x 210 դրամ) Ընդամենը ֆինանսական միջոցներ՝ 1,966,800 դրամ Իրականացման ժամկետը՝ 25 մայիս – 30 հունիս, 2021 թ. 2. Տրանսպորտային ծախսեր՝ 84,200 դրամ Իրականացման ժամկետը՝ 25 մայիս – 30 հունիս, 2021 թ. Հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամի աշխատակազմն իրականացնելու է ստուգայցեր ծրագրերի իրականացման վայրեր, ծրագրերի մշտադիտարկում, պատրաստելու է հաշվետվություններ ֆինանսավորող կազմակերպության համար, կազմակերպելու է ծրագրի աուդիտը: Վարչական ծախսերի համար Ֆինանսական միջոցներ նախատեսված չեն:

10.	Ձեռքբերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	• պոլիէթիլենային թաղանթ՝ 800 մ² x 530 դրամ = 424,000 դրամ • պրոֆիլ՝ 300մx 400 դրամ = 120,000 դրամ • 264 հավ, 36 աքլոր՝ 832,800 դրամ • կեր՝ 1,134,000 դրամ • Տեղափոխության ծախսեր / վառելիք՝ 84,200 դրամ Ընդամենը Ֆինանսական միջոցներ՝ 2,595,000 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Տեղափոխության ծախսեր / վառելիք՝ 84,200 դրամ
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավար-ման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամն համագործակցում է տեղական ինքնակառավարման մարմինների, մարզպետարանների, ՀԱԵ թեմերի, տեղական կազմակերպությունների հետ, որոնք գործունեություն են ծավալում Կլոր սեղան հիմնադրամի աջակցությամբ իրականացվող ծրագրի վայրերում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի վերահսկողությունն իրականացվում է գործադիր տնօրենի, գլխավոր հաշվապահի և ծրագրերի ղեկավարի կողմից, իսկ ամենօրյա վերահսկողությունը կատարում է ծրագրի պատասխանատուն, որը պարբերաբար այցեր է կատարում ծրագրի իրականացման վայրեր՝ մշտադիտարկման նպատակով՝ ներկայացնելով հաշվետվություններ: Պարտավորվում ենք հաշվետվություն ներկայացնել համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թ-ի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Տ. ԱՎԻՆՅԱՆ

14.06.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ